ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆԻ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Ստեղծագործական անդուլ աշխատանքի ուղի է անցել գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Վահան Հարությունի Ռշտունին (1894—1970):



Սովետահայ պատմական գիտության ականավոր ներկայացուցիչներից մեկն էր նա, նշանավոր մանկավարժ, հասարակական գործիչ, որի բահավոր ուսուցողական խոսքը նույնչափ բազմարովանդակ ու գրավիչ էր, որչափ խորն ու համակողմանի է գիտա-հետազոտական գրավոր ժառանգությունը: Թե՛ մեկը, թե՛ մյուսը արդյունք էին անսպառ աշխատասիրության, երիտասարդության կրթության ու կոմունիստական դաստիարակության գործին նրա բոլորանվեր մասնակցության և մարքսիստական աշխարհայացքման դիրքերից ընդհանրացվող պատմագիտական երկարատև, բնաիսյզ պրպտումների: Իսկ ավելի նիշտ՝ այդ բոլորի ներդաշնակ զուգակցումո՛վ իմաստավորվեց արժանահիշատակ բաղաքացու և խոհուն գիտնականի կյանքը:

Վաղարշապատում, արհեստավոր-գյուղացու ընտանիքում ծնված Վ. Հ. Ռշտունին ուսումնասիրության անդրանիկ քայլերը կատարեց այն տարիներին, երբ հայ իրականության մեջ մարքսիստական զաղափարների հաղթարշավը անկասելի փաստ էր: Ծանոթանալով այդ զաղափարներին, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սանը անհաշտությամբ համակվեց կղերական հետադիմության ու սոցիալական անարդարության հանդեպ և մասնակցեց ուսանողական ցույցերի: 1915 թ. հեմարանն ավարտելուց հետո, այնտեղի հայագիտական մրցույթում ձեռք բերած անհրաժեշտ գիտելիքներով, Վ. Հ. Ռշտունին անցավ մանկավարժական գործունեության՝ սկզբում Թավրիզի, ապա՝ Ախալցխայի, Սուխումի և Թիֆլիսի հայկական դպրոցներում. 1919 թ. ուսումը շարունակեց Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակագիտական ֆակուլտետում, որը և հաջողությամբ ավարտելով 1924 թ. վերադարձավ Հայաստան՝ դասախոսական աշխատանքի: Այստեղ էր, որ նախ Երևանի կուսակցական դպրոցում, այնուհետև՝ հատկապես Երևանի համալսարանում և հանրապետության այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատած տարիներին դրսևորվեց նրա գիտա-կազմակերպչական, մանկավարժական տաղանդը: Վ. Հ. Ռշտունու անվան հետ է կապված Երևանի պետական համալսարանում ՍՍՀՄ պատմության ամբիոնի հիմնադրման նախաձեռնումը, որի ղեկավարն էր շուրջ տասնամյակ անընդմեջ: Այստեղ նա դասախոսեց սոցիալիզմի պատմություն, ապա՝ մշակեց ու վարեց ՍՍՀՄ պատմության դասընթացը, եղավ համալսարանում պատմության գծով ասպիրանտուրայի հիմնադիրներից մեկը: Ավելի քան հիսուն տարի նա չթուլացող եռանդով ու նվիրումով կանգնեց հանրապետությունում երիտասարդ սերնդի ուսուցման, հասարակագիտության բնագավառի գիտական կադրերի և բարձրորակ մանկավարժների պատրաստման կարևոր գործի առաջագծում:

Ծանրակշիռ է Վ. Հ. Ռշտունու ներդրումը սովետահայ պատմագիտության մեջ: Նրա բեղմնավոր գրչին են պատկանում XIX դարի և XX դարի սկզբի հայ ժողովրդի պատմության մի շարք առանցքային հարցերի նվիրված բազմաթիվ գիտական աշխատություններ: Ուշագրավ են հատկապես նրա «Հայ հասարակական հոսանքները և 1861—1864—1870 թթ. գյուղացիական ռեֆորմը» (Երևանի պետհամալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 13, 1940 թ.), «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.» (ռուսերեն, 1947 թ.), «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» (1956 թ.), «Մուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» (մաս Ա, 1960 թ., մաս Բ, 1968 թ.) ծավալուն աշխատություններ-

ը, ինչպես նաև բազմաթիվ այլ ուսումնասիրություններ, որոնք լույս են տեսել համալսարանի «Տիտական աշխատություններում» (1946 թ., հատ. 23, 1948 թ., հատ. 27), ԴԱ հասարակական գիտությունների «Տեղեկագրում» (1945—1947 թթ. համարներում):

Մեծ են Վ. Հ. Ռշտունու ծառայությունները արևելահայ գյուղացիության և գյուղացիական շարժումների (հատկապես XIX դարի վերջի և XX դարի սկզբի) պատմության ուսումնասիրման ասպարեզում: Բացի նշված «Ուրվագծերից», գյուղացիության սոցիալ-տնտեսական և **իրավական դրության**, ցարիզմի սոցիալական բաղմականության և հայկական գյուղում ծավալվող դասակարգային պայքարի հարցերը նա բարձրացրել է նաև (Կ. Ստեփանյանի մասնակցությամբ կազմած) սկզբնաղբյուր-փաստաթղթերի արժեքավոր հավաքածուներով: Արխիվներում տարիների ջանասեր աշխատանքով հայտնաբերված ու գիտական շրջանառության մեջ դրված փաստաթղթերը ամփոփվել են «Գյուղացիական շարժումները Հայաստանում XIX դարում», «Ցարիզմի ազգային բաղմականությունը Հայաստանում XX դարի սկզբին», «Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում ցարիզմի ազգային բաղմականության պատմությունից» ժողովածուներում:

Վ. Հ. Ռշտունին հայ ժողովրդի պատմության կարևոր հարցերը քննարկել է Ռուսաստանի, հատկապես Ադրբեջանի ու Վրաստանի պատմության հարցերի հետ առնչված: Նա ցույց է տվել անդրկովկասյան երկրամասում ցարիզմի բաղմականության կիրառման, ռուսական կապիտալիզմի կողմից Կովկասի տնտեսական նվաճման ու հարևան երկրների սոցիալ-տնտեսական զարգացման և՛ ընդհանուր, և՛ առանձնահատուկ գծերը: Այս իմաստով նրա գիտական վաստակը, դուրս գալով իր հայագիտական նշանակության շրջանակից, հայտնի չափով վերաբերում է նաև կովկասագիտությանը:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը բարձր են գնահատել Վ. Ռշտունու ծառայությունները՝ պարգևատրելով նրան Լենինի շքանշանով, Հայկական ՍՍՀ Դեռագույն սովետի պատվոգրով և շնորհելով գիտության վաստակավոր գործչի կոչում:

Նշելով Վ. Հ. Ռշտունու ծննդյան 80-ամյակը, մենք այսօր մեկ անգամ ևս հարգանք ենք արտահայտում անվանի գիտնականին ու վաստակաշատ մանկավարժին:

Ս. ԱԼԻԽՍԱՆՅԱՆ